ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1472 10.10.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Խնդրում ենք Դիտորդական խմբին տեղեկացնել, թե Հեղինե Հայկազի Հարթենյանը 21.02.2014թ-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ.

1. Ընդունվելուց ինչ մարմնական վնասվածքներ է գրանցվել,
2. ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում ինչ մարմնական վնասվածքներ է ձեռք բերել
3. Ինչ մարմնական վնասվածքներով է տեղափոխվել ՀՀ ՆԳՆ <<Արովյան>> ՔԿՀ:

Կանխավ հայտնում ենք մեր շնորհակալությունը համագործակցելու համար:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏՈՑ № 4056
«13» 10 2014 թ.

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՏՈՑ № 7930
«13» 10 2014 թ.

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-2680 <<23>> 10 2014թ.

Ձեր 10.10.2014թ. թիվ 2621/1472 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ՝

տիկին Հ. Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Ձեր գրությունը քննարկվել է ՀՀ ոստիկանության շտաբում և Երևան քաղաքի վարչությունում: Ոստիկանության Երևան քաղաքի վարչության կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում տրամադրված տեղեկատվության համաձայն՝ հայտնվում է, որ ձերբակալված Հեղինե Հայկազի Հարթենյանը Երևան քաղաքի վարչության ՁՊՎ է ընդունվել 21.02.2014թ. ժամը 04.45-ին, սահմանված կարգով ենթարկվել է բուժզննության, որի ընթացքում մարմնական վնասվածքներ չեն հայտնաբերվել:

21.02.2014թ. քննչական գործողություն կատարելու նպատակով՝ Հ.Հարթենյանը դուրս է բերվել ՁՊՎ-ից, նույն օրը հետ է վերադարձվել ՁՊՎ, որից հետո սահմանված կարգով ենթարկվել է բուժզննության, որի ընթացքում վերջինիս ազդրերին հայտնաբերվել են կարմրավուն հետքեր և արձանագրվել են <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում, ինչպես նաև այդ մասին իրազեկվել է վարույթն իրականացնող մարմնին:

23.02.2014թ. որոշում է կայացվել Հ.Հարթենյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, սակայն վերջինիս առողջական վիճակի վատթարացման հետևանքով հնարավոր չի եղել դատավարական գործողությունն ավարտին հասցնել և ժամը 16.43-ին Հ.Հարթենյանը տեղափոխվել է հիվանդանոց: 24.02.2014թ. Հ.Հարթենյանին մեղադրանք է առաջադրվել, 25.02.2014թ. միջնորդություն է ներկայացվել Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդանուր իրավասության դատարան՝ մեղադրյալ Հ.Հարթենյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար և վերջինս բժշկական կենտրոնից ներկայացվել է դատարան: Դատարանի կողմից բավարարվել է միջնորդությունը և միաժամանակ մեղադրյալ Հ.Հարթենյանին գրավով կալանքից ազատելը ճանաչվել է թույլատրելի: Դատարանից Հ.Հարթենյանը տեղափոխվել է Նոր Նորքի բաժնի հերթապահ մաս, այնուհետև՝ <<Աբովյան>> ՔԿՀ:

ՀՀ ոստիկանության շտաբ